

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^ր ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻ 25

19 ՅՈՒՆԻՍ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր կրօնական շրջապատները (Ս. Թարգմանչաց սօնին առթիւ) ՀԱՐՄԱԿ:—Մոլորանք (Նորակայ) Շ. ՇԱԽԱՐՇ:—Աստուածն հուսկ յեփն (Քերթուած) ԼԸՔՈՆԴ ՏԸ ԼԻԼ. գրաբարարգմ. ՏԻԳՐԱՆ ԵԼՔԵՆՃԵԱՆ:—Դիտական Բրոնիկ. ՆՈՒՊԱՐ:—Դիւղանկար (Բանաստեղծութիւն) Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ:—Դրագիր հին Աւեստան մը. Յ. Հ:—Խմբագրական ՆՈՒՊԱՐ:—Զանազանք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթների տարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դրո. եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արժանահամը՝ 12 Ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթաստրական ծախքը համագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւնը չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելի ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն համագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուի:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուի:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայմաններով:

Զեռ-ԲԵ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیاده غلطه ده (ماسيس) غرضه سى اداره سى

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. Կապարութեան ֆոնդօրիմ ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ եւր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոյ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ զաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ դաւառներու կարգ մը պաշտօնատուններէն զատ, Բարիսլի՝ Օրէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ Պօռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատունները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտիւնիէոի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հավր-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է զիմեւ հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար, Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ — Պօլիս. Մանուէտ փաշա, Պէօլիք Նըլադը խան, թիւ 14, Լա Դօնֆրանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անքիֆալ վաճառատուն մը, Շուկայ Սահաֆլար, թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յաճախորդութիւններ կ'ընդունուին:

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ

1.—Արձագանդ խաղաղութեան, հեղինակ իշխան Միրզա Րիզա Խան Տանիշ (Պարսկ. դեսպանի Կ. Պոլիս) Ոսանաւոր քերթուած մը ի իշխանակ Լահէի խաղաղութեան համաժողովին, տասնըհինգ լեզուներու թարգմանուած փառաւոր գեղարուեստական հատոր մը հեղինակին կենդանագրով միասին: Դին կէս Օսմ. ոսկի կամ 12 ֆրանք. —2. Հերպերթ Սթենսլի «Կենցաղ կամ Դաստիարակութիւնը»: Տիեզերահռչակ իմաստասէրին այս բազմագուտ գործը թարգմանուած սահուն աշխարհարարի, կ'արժէ որ ամէն գրագարանի մէջ իր մասնաւոր տեղն ունենայ. Դին 10 զրուշ. 3. Գերման բրոֆէսէօր Ա. Ալպրէխթի գործերէն սեռային առողջաբանութեան վրայ խօսող «Մարդը եւ իր ցեղը» անուն խիստ շահեկան գործին Բ. Տիպ. —գին 5 զրուշ: 4. Ժողովրդական քարոզներ. «Կեանքը առանց հաւատքի», գրեց Ներսէս վրդ. Դանիէլեանց գին 5 զրուշ: 5. Շարահանք Հայ. Ա. Եկեղեցւոյ, աշխարհարարի վերածեց Ե. Տ. Անդրէասեան:—Դին Ա. հատորի 2 զրշ, Բ. հատոր 5 զրշ.



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սնենայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐԱԹԱՍԿԱՆ
ՄԱՍՆԱՎՈՐՈՒԹԻՒՆ

ԲԵՐՍ.

- 1. Մեծ փողոց, Պօն Մաուշէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին.
- 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ.

- 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
- 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

- 1. Սուլթան Համամ, Թ.
- 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՒՏԱՐ

Չարչը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երախաւորութիւն:

Մասնահիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղողլուի տունը:

ՀԻՒՄՆԴՈՒԹՅՈՒՆԷ ՎԵՐՋԸ ԶՅՐՈՒԹՅՈՒՆ

Նրբ սենյակներ և երկայն հիւանդութիւններ և անհանգստութիւններ որոնք մարմինը տկարացուցած և ընդհանուր անզօրութեան մէջ ձգած են, ի հարկէ մարդոց զօրացուցիչ բանի մը կարօտ է որ զվերջը շուտմը կատարեալ առողջութեան հասցնէ:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ առաջին կարգի զօրացուցիչ դեղ մըն է և իրեն հաւասարը չկայ: Ասիկայ թէ անորժակ կուտայ և թէ մարտողութիւնը կը շնայէ: Մարմինը իր զարգացընէ և նոր հարուստ արիւնէ կուտայ, կենսաբուծիւնը իր վերականգնէ և հիւանդութեան դիմադրելու համար ընդհանուր դրութեան զօրութիւն կուտայ: Ընդօժի Բաղադրութիւնը թէ կէրակուր է թէ դեղ է. և տկարացած դրութեան մը կալօյ եղած միս և զօրութիւնը առատապէս կը մատակարարէ, և ասոր անհամար օգտակար գործողութիւնները ստուգել զարմանալի են: Անտարակոյս մեծ վտանքի մէջէ դրութիւնը երբ միս և դաւալ կը կորսնցնէ և հետեապէս շուտմը աշխարհ կը տկարանայ որ հիւանդութիւններու գիրաւ զոհ կ'ըլլայ:

ԸՍԿՕԹԻ ԲՆԿԱԹՐՈՒԹՅՈՒՆ

բոլոր կերակուրներու զօրութիւնը կը պարունակէ, դոժի վատնումը կը դադարեցնէ և առողջատե միս կը կազմէ: Ընդ միշտ վարդադոյն փաթեթի մը մէջ և վրան այս պատկերով կը դրանուի:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

25

Բոլոր բեղադրանքները և բեղաձառանքները ին ծախեն:

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի մաքրութեան եւ նորոգութեան (Գրանենեակ՝ Մտնմուտ—փոշա, Թարագծը. լար, Մեծ Նոր Սանի կից, Թ. 37)

Այս հանրածանօթ գործարանին մէջ կը մաքրուին աղտոտած եւ փոշա թէ՛ մետաքսէ եւ թէ՛ բամբակէ ամէն տեսակ ընտիր գորգեր, քիմիական դեղորէից միջոցաւ, առանց ո՛ր եւ է արտա կամ հետք ձգելու: Բնդհանուակը, բաւրբովին նոր երեւոյթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը:

Ունի նաեւ առաւելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին մէջ մաքրուած գորգերը գերծ կը մնան ցեցերու (կիւվէ) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով վնասուած գորգեր:

Սոյն գործարանը կը ստանան նաեւ պատրաստել նոր գորգեր, ինչ մեծութեամբ ու ձաշակով որ ուզուի:

Յանձնարարութիւնը պէտք է ուղուին գրասենեակը:

Դիւրամատչելի պայմաններ:

ՏՈՔԹ. ՔԻՐԻԱԲՈՒ

Dr. Kiriakou Banderjali

Ջիդերու, լեարդի եւ usամօսի հիւանդութեանց մասնագէտ:

Բարիզի հիւանդանոցներուն մէջ գործեալ կան փորձեր կատարելով վերագրեալ հիւանդութեանց համար մասնագիտութիւն ձեռք բերած է: Իրեն դիմողները կը դարձան ամէն օր ժամ 7էն 10 Բերա Աղա Համամ հեղինակեալ հիւպատոսարանին դէմ, թիւ 5 տունը, իսկ առտունները միջեւ կէսօր Պոլիս կամար ջին գլուխը Բոսթաքի Արսէնաքի թիւ 71 դեղարանը: Ինչ տանի մէջ կը դարձան չղալին տկարութիւններ, լուսնաութիւն, անդամալուծութիւն, գլխաւ ցաւ, սրտի բաւաւմ, անքունութիւն, անփութիտեան ախտ, յօղացաւ, օտամոքսի հիւանդութիւններ, դժուարաժարութիւն, արգանդի հիւանդութիւն եւ այլն: Դարմանման համար ներարկումով փրկարականութիւն կը գործածէ: Ելեկտրական դարմանի համար մասնաւոր սրահ մը կայ:

ՄԱՍԻՆ

54^ր ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 25

19 ՅՈՒՆԻՍ 1904

ՄԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ՇՐՋԱՊԱՏԿԵՐԸ

(Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ)

Մեր կրօնական հորիզոնը բարդ երեւոյթներ չի ներկայացներ, մասաւոր կեանքն ալ ընդհանրապէս շատ խաղաղիկ ու միօրինակ կ'անցնի հոն. ոչ արաւկեդրոն տեսութիւններ, ոչ հոգեւորականի անկեղծ, խոր և ներոյժ ախպարներ, որոնք կը յատկանշեն քրիստոնէական կեանքը՝ ուրիշ համայնքներու մէջ:

Իրաց այդ կայուն մակարդակին վրայ՝ հազիւ թէ թեթեւ ընթացքներ մը կը նշմարուին, որոնք տակաւին կրօնական ինքնազարգացման մը ոգեւորութիւնը ստեղծելու չափ հոսանքի մը թափն ու ուղղութիւնը առած չեն: Արդի քաղաքակրթութեան ընկլուզող ազդակներուն հանդէպ, անհրաժեշտ է՝ կրօնական դարգացման մը զուգահեռականութեամբ՝ հակակիւռ դիրք մը չինել, հոգեւոր կեանքը իր ազդեցութեան և հաւասարակշռութեան մէջ պահելու համար: Եկեղեցին այն ատեն միայն իր բարձրութեան վրայ կը մնայ, առողջ և կատարեալ սնունդ մը հոսեցնելով իր ծոցէն, երբ նադատակայարմար ըլլան իր բոլոր միջոցները:

Այդ միջոցներն են եկեղեցւոյ բեմը, իր մամուլը, իր պաշտօնէութիւնը և նաեւ իր հասարակութիւնը, — այդ այլազան սարրերը համադրող ամբողջը, որ իրրեւ պատճառ և արդիւնք, իրրեւ ներգործող և կրաւոր մարմին մը կը ներկայանայ:

Բեմը եկեղեցւոյ ամենակարեւոր կազմա-

կերպիչ ոյժն է, իր հեղինակութիւնը, իր բարձրաւանդակը, ուսկից նա՝ վերէն՝ անխռով տեսութեամբ մը իրերու և մարդոց, ներհակ հոսանքներու մէջէն կարող կ'ըլլայ վարել իր նաւը, ուղղելով զայն դէպի կրօնքին պայծառութիւնները: Ուստի, այդ բեմին վրայ կարողները միայն արժանի են ելնելու, մտքի և սրտի լայն մշակութեամբ մը պատրաստուած, բացարձակապէս անկեղծ հոգիներ, ուր գիտակցութեան երկուութիւն չկայ և որոնք «ի յաւելուածոյ սրաին» կը խօսին: Պերճախօսութեան ոսկի շղթան շատ կանուխէն պարապնդած էր եկեղեցւոյ ամէնէն փայլուն միտքերը. — «Պերճախօսութիւնը և յունական արուեստը մեզի, տգիտութիւնը և բրտութիւնը ձեզի», կըսուէր Գրիգոր Նազեանդացիին որ կը պատասխանէր. — «Հարուստութիւնները, փառքը, և այս աշխարհի բոլոր բաները որ երազի մը պէս կ'անհետանան՝ ձեզի կը թողում, բայց կը պահեմ պերճախօսութիւնը»: Եկեղեցին որ եռադարեան շրջանէ մը ետքը, Գ. դարուն՝ Յունա—Հռոմէական քաղաքակրթութեան միջնորդութիւն մէջ կը ծաղկէր, և իր աշխարհականացման վտանգին ի տես՝ այլամերժ խորշում մը կը ցուցնէր գիտութեան, արուեստի և կենցաղասիրական բոլոր բարիքներուն հանդէպ, հեթանոս ճարտարախօսութեան արուեստական ամբողջ կաղմածը կը փոխադրէ իր բեմին վրայ, զոր կը նկատէ իրրեւ իր ամէնէն բեղուն և զեղուն զօրութիւնը:

Հայ եկեղեցւոյ բեմն ալ ունեցած է իր փայ-
լուն շրջանները, իր բեմական ուրոյն պաշ-
տօնեան՝ վարդապետ տիտղոսով, իր պատ-
կառուն տարազովը և օճագլուխ գաւազա-
նովը որուն գերազանց նախատիպարը կը
գտնենք Ն. դարու ոսկեղէն բարձրութեան
վրայ, և որուն շողերէն շլացող Մ. Խորե-
նացին սապէս կ'արտայայտէ իր հիացումը —
« (Ս. Մեսրոպ) ո՛չ որպէս արուեստ ուսու-
ցանէր, այլ իբրև զհօգի առաքելաբար աշա-
կերտելոցն տայր »: Կեղծիքը կը ցամքեցնէ
ամէն ներշնչում, և ուր որ քարոզութիւնը
արուեստակութիւն, ի պաշտօնէ խօսելու սո-
վորամոլութիւն մը կը դառնայ, հոն բեմը կը
դադրի հոգեւոր բարձր կեանքի մը շարժիչ
և թելադրիչ ոգին ըլլալէ: Ոգին գերազան-
ցապէս պերճախօս է. մէկը երբ իր սրտէն,
իր համոզումէն, իր հոգիին խորութենէն կը
խօսի, որքան ալ արուեստին շողշողուն
պատմութեամբով չկարենայ ցուցադրել իր խօս-
քերը, նա դարձեալ անդիմադրելի կերպով
կը գրաւէ, կը մազնիսացնէ հոգիները: Զի
ոչ թէ շրթունքն է որ կը բարբառի պատե-
հութեան մը թելադրութեան տակ, այլ ամ-
բողջ մարդը, իր էութեամբը, իր արիւնն
ու ջիղը:

Խօսքին զուգընթաց ոյժն է գրիչը, և
անոնց գործակցութիւնը հրաշալի արդիւնք-
ներ կը ծնի: Գիրը կը յաւերժացնէ խօսքը
և ոգիին ազդեցութիւնը կ'երկարածէ ժա-
մանակին մէջ: Հակառակ այն իրողութեան,
թէ կրօնական գրականութիւնը երբեմն հայ
մտքին ամենամեծ ոյժերը սպառած է, իր
միակողմանի հեռակէտին վրայ կեդրոնաց-
նելով դանոնք, այժմ այդ կալուածը շատ
սահմանափակ է և ամուլ: Ս. Գրոց գի-
տութիւնը իր այժմեան բազմամասն և մե-
ծահարուստ պաշարովը գրեթէ անմատչելի
կը մնայ մեր եկեղեցական և գրական դա-
սակարգին: Միակերպ և ցամաք Քրիստոնեա
կաններու մէջ կըստափ կրօնքին նիւթը.
հին մեկնիչներով կը փակուի կրօնային հե-
տադրութեան անհուն դաշար, և օրբա-
զան բանաստեղծութեան արտադրութիւնները
թեթիւ յօդուածներու և գրական քարոզնե-

րու մէջ կը խտանան: Քարոզի մշակութիւնը
որ վերջերս նոր թռիչ մը կ'առնէ՝ անօրինակ
երեւոյթ մը չէ մեր մէջ. ձեռագիր քարոզնե-
րու բազմաթիւ ստուար հատորներ ունինք:
Միայն թէ, արդի քարոզագրութեան և հինին
միջև եթէ հարկ ըլլայ բաղդատութիւն մը
ընել, հինը կարի վարդապետական — մեկնո-
ղական, նորը յոյժ գործնական և բարոյա-
գիտական կը գտնենք: Մեկնելով այն սկզբ-
բունքէն թէ եկեղեցւոյ բեմը միմիայն Աս-
տուծոյ խօսքին լուսան է, անհրաժեշտ է որ
կրօնական տարրը միշտ քարոզին կեդրոնը
գրաւէ իբրև անոր հիւթը և գոյացութիւնը
որուն խորքէն բղխի, ծաւալի և ճառագայթէ
գաղափարներու ամբողջ հոսանքը: Այդ
տարրը երբ կը պակսի, քարոզ մը ընդհանուր
գաղափարի մը կամ վերացական բառի մը
ընդլայնման տպաւորութիւնը կը թողու վրադ
և կը կորսնցնէ իր օժութենէն ու ազդեցու-
թենէն: Մարդկային ամէն ազնիւ սկզբունք,
չգացում և կիրք՝ իր չքեղ արտայայտու-
թեան համար հրաշալի պատկերներ կրնայ
գտնել Ս. Գիրքին մէջ. խնդիրը կը մնայ
ցայտուն, սրտին զարնող բնաբան մը ընտրել
և անոր մինչև խորը իշնելով դուրս բերել
ինչ որ կայ հոն ճշմարիտ և արժէքաւոր գե-
ղեցկութիւն: որ պիտի պարարէ հոգեկան
կեանքը:

Սակայն գիրը կամ բեմը մեռեալ կը մնայ,
եթէ հոգեւոր պաշտօնեան կեանքի չփոխէ
զայն: Անկեղծ եկեղեցականը չի բաւակա-
նանար միայն կրօնական թերութիւններու
քննադատութեամբ և տրտուհիով, այլ նա-
խապէս իր ներքին կեանքը չինելով՝ ինքը
անձամբ կը մօտենայ այն աստուածային դա-
շափարականին զոր կը ցուցնէ իր ունկն-
դիրներուն, որպէս զի իր խօսքը, իր զգա-
ցումները, իր մտածութիւնները իր իսկ էութե-
թենէն ճառագայթեն: Դարուս ազդեցու-
թեանը տակ ինչպէս ալ խորհինք, ինչ առա-
գաստ ալ բանանք լայն կեանքին հովերուն
առջև, եկեղեցականներուս համար էական
պայման մըն է հրաժարումին սկզբունքը:
Հրաժարիլ ո՛չ թէ կեանքէն, քաղաքակրթ-
ութենէն, այլ այն ամէն բաներէ որոնք

կեղծ, պայմանադրական, հարեւանցի և ցուցասիրական են լուրջ և անլուծելի հարց մըն է թէ ինչպէս պէտք է հաշտեցնել Աւետարանն ու աշխարհը, Աստուածն ու մամոնան։ Աւետարանական ժուժկալ ոգին հինուց ի վեր բողոքած է զարդասէր և պերճաբարոյ եկեղեցականներուն դէմ, Զաւէն կաթողիկոսէն սկսեալ, որ ասղնագործ երփնագոյն նկարներով, նարօտներով, ծոպերով զարդարուն զգեստներ և մուշտակներ կը հագնէր, մինչև Շնորհալին որ առաջնորդներուն կը պատուիրէ «ի զգեստս մի՛ աշխարհօրէն բերել, ո՛չ երեւելի և կաղմեալ երկվարօք, ո՛չ սրնթաց ձիովք շահատակել, և շամբք և բազէիւք որսականօք բերել առ երէ վայրիս եւ թռչունս», և մինչև Լամբրոնացին՝ որ արեւելեան վարդապետները կ'եպերէ իրենց «գինըմպութեան եւ որովայնապարարութեան» համար։ Ամէն ասպարէզ իր որոշ դաշտը, իր պարտականութիւնները, իր հարկեցուցիչ կարգապահութիւնը, իր պատիւն ունի, զոր պահելը ընկերային հարկ մըն է։

Եկեղեցականի մը գործերուն արժէքին իսկական ստուգանիշը իր ներքին շարժառիթներն են, երեւոյթները շատ դիւրաւ կը խաբեն, վասնզի փառամոլութիւնը և գովուելու տենչը մեծ դեր կը խաղան եկեղեցականին հանրային գործունէութեան մէջ։ Շատ անգամ արող նախապաշարունակներու և հինցած կարգերու դէմ եկեղեցականի մը կողմէ զրուտծ բռնուն յօդուած մը բաւական կ'ըլլայ որ նա մեր մամուլէն ողջունուի իբր ամէն առաքինութեան և կատարելութեան տիպար մէկը, որ առաքեալի մը լուսապսա՛ռովը՝ քաւորուի, որ համեմատութեան դրուի կրօնական որ և է մեծ անձնաւորութեան մը հետ։ Թեթեւամտութեան, անփորձութեան, չտեսութեան ախտանիշեր են ասոնք, որոնց ամէջ ատեն հանդիսատես կ'ըլլանք։

Անշուշտ հասարակութիւնն ալ պատասխանատու է այս վիճակին։ Ժողովուրդը խոր և բաղմայօղ կապերով միացած է իր մասնաւոր հաստատութիւններուն եւ մտաւոր ու կրօնական արտադրութեանց հետ։ Մեր կրօ-

նական արդի պատկերը աչքի զարնող աններդաշնակութիւն մը չի կաղմեր մեր տոհմային կեանքին միւս էջերուն հետ։ Կրօնական բեմը, զբաղանութիւնը, հոգեւոր պաշտօնէութիւնը իրենց արդի կաղապարովը, խմորովը մեր ընկերական ընդհանուր զարգացման համապատասխան են։ Աւելի՛ յառաջդիմելու համար, պէտք որ է հասարակութեան մտաւորականը կերպարանափոխուի ու աւելի՛ զարգանայ։

Արմատ

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ

ՏՊԱՐԱՆԱՅ ԸՆԴՀ. ՔՆՆԻՉԻ

— 1000 —

Գոհութեամբ կը ծանուցանենք, ինչպէս արդէն հաղորդեցին օրաթերթերը, թէ ներքին գործոց նախարարութեան աւագ պաշտօնատարներէն Վսեմ. Սիսակ էֆ. Ֆէրիտ՝ Տպարաններու Ընդհանուր Քննիչ անուանուած է։ Վսեմ. Սիսակ Ֆէրիտ էֆ. իր կարողութեամբ և օգտակար ու խղճամիտ պաշտօնավարութեամբ արդէն իսկ պատուած է աստիճանով ու պատուանշաններով, և պաշտօնի այս բարձրացումը նոր և արժանաւոր գնահատում մըն է որուն առթիւ Մասիսի նմաբարութիւնը իր շնորհաւորութիւնները կ'ուղղէ ն. Վսեմութեան։

Ա.Գ. ՀԻԻԱՆԴԱՆՈՅ

Ա.Գ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան բարեջան ատենապետ Վսեմ. Պատրիկ էֆ. Կիւլպէնկեանի վերադարձէն ի վեր, այդ Հաստատութեան ներքին գործերը ու կազմակերպութիւնը խնամոտ ուշադրութեան մը առարկայ դարձած են և նոր զարկ մը արուած է կարգ մը պէտքերու լրացման։ Ասոնցմէ գլխաւորն էր Ընդհ. Տնօրէնի մը ընտրութիւնը որ կատարուեցաւ վերջնականապէս, այդ պաշտօնը յանձնուելով Յակոբ էֆ. Համաձեւեանի, որ պահանջուած կարողութիւնը ունի՝ ինչպէս կը վկայեն բոլոր զինքը ճանչցողները։

ԱՍՏՈՒԱԾՆ ԼՈՒՍԿ ՎԵՐՁԻՆ



Քաջ ի բաց անդրը քան զկէտ ամաց աւուրց անհամար,
Յետ մղեգին փախըստի առանցելոց յաւիտեանց,
Այս են ահա զոր տեսիս, յետ ցընդելոյ սին տեսլեանց,
Յանփութիս յայնմ երազի՝ որ յաճախէն առ իս յար:

Յածէի մէն ընդ երկիր, և երկիր էր մերկ և լոկ,
Հինն հեծութիւն կենդանեաց էից լըռեալ էր խալառ,
Թառանջք հողմոց ողբք ծովուց հատեալ կային անբարբառ
Խաղաղացեալք յաւիտեան ընդ անխըլիրտ լայն ամպովք:

Ընդ թափուր վայրս անսահման, Գունտըն փետեալ և տըխուր,
Անյոժսութեամբ և ցաւովք չարալըլուկ չարագան,
Ծամածըռեալ զխորտարորտ խըստաքարեայ զիւր պատեան,
Դիմեալ գընայր, մոռացեալ զի կեանք երբեմն էին իւր:

Կատարք ի վեր ցըցէին կըղզեաց դարուցն անցելոց
Ի վիթխարի վիհ վիրապս ովկիանուց անջըրդի,
Ուր սարսատեալ դընէին խառըն նըլխարք զի առ դի
ժամանակացն որ ընկան յալս հինաւուրց անդընդոց:

Մեռելական ջահ ի լոյս համր և լըռին դամբանի
Արեւն հիւծեալ՝ ընդ տըմոյն երկինս ի կախ տըրտմագին,
Ողողանէր սըգալից ի հուսկ նըլոյլ իւր յեալին
Ըղմենութիւնն անսահման՝ ուր գոյր ինչ ո՛չ կենդանի:

Թափառէի ես հոգւով, վարատական ըստուեր սին,
Թափուր յըղծից և ի կրից, բըռնավարեալ ըստ դիպաց,
Երազանցուկ մարդկութեան մի ի անտի նըլխարաց,
Զոյր էր գաճիւնսըն մաղեալ շունչ մի յանհուն միջոցին:

Եւ հայեցայ և տեսի ի բարձր ուրեք սար լերին
Զի ուրու համր անըզգած, քան զձիւն անհալ ցըրտագոյն,
Ի բիրս անշարժ, կայր գըրգայր ըզբընութեամբ մահաքուն,
Զորով ձըգեալ ի վերուստ կայր անապատն երկնային:

Ոսկեղինիկ վեհ դարուցն ոլիմբական դից տիպար՝
Կանգնէր հասակ գեղեցիկ վըսեմակերպ մեծ ուրուին,
Իրբև յաւուրան՝ յորս նոքա շուք և սլաշտօն առնուին
Յիւրեանց բագինս ի Մարդոյ՝ որ չև եղեալ էր թըշուառ:

Սակայն Աղեղն՝ ուստ երբեմն իղձք ոստնուին ծնընդագործ,
Թաղեալ ի ձեանց կայր կուտակս, հանդերձ Թեւովքն այնոքիւք՝
Որ զձեր համբոյրս ածէին, ո՛ր շուշաներվին Անամաք դուք,
Այսր ի շըրթունըս հովուաց՝ առ ի շըրթանց աստուածոց:

Սակայն ոչ ևս ի ճակատ նորին էր լոյս վարդազոյն,
Ոչ ևս իւրք բարախէր ծոցիկ նորին պաշտելի,
Որ ի ծագելն աշխարհի հեղոյր զնովաւ լի և լի
Ըզբաղցր ըզջերմ քո ծորանս, ո՛ր նախաւորդ Հեշտութիւն:

Եւ արհաւիրքն և հաճոյք և յիշատակք դառնագին
Ապաժուծից արտասուաց՝ որ յետ ժամուց վայելից,
Եւ զըմբաղք յոյժ ի յերկնուստ թալկացուցիչք հասեալ ինձ,
Երկաթակուռ կապանօք կալեալ զիմ սիրտ պատեցին:

Եւ ես յամուլ աշխարհի անդ կարկամեալ սառուցիկ՝
Ծանեայ զի էր անդ անոստ յանարթնական թաղեալ քուն
Սիրելագոյնն և վերջին յաստուածըս, Սէրն հընաբուն,
Որով կեայ Մարդ եւ Աշխարհ, և է մահ անդ՝ ուր նա չիք:

ԼՐԲՈՆԴ ՏԸ ԼԻԼ

Թարգմ. ի գալիականէ
ՏԻԳՐԱՆ ԵԼՔԷՆՃԵԱՆ

ՄՈԼՈՐԱՆՔ

(ՆՈՐԱՎ ԷՊ)

Գ. Ն. Ս.ԻՆ

Oh, Thou, who Man of baser Earth didst make,
And who with Eden didst devise the Snake,
For all the Sin wherewith tho Face of Man
Is blacken'd, Man's Forgiveness give—and take!
(KHAYYAM—FITZGERALD)

Ա.

«Սխալ ճամբայ կը բռնես կոր, տղաս...»
— ըսաւ վերջապէս Արսէն էփէնտի Սատափ-
եան իր զիջումին նահանջի մը ձև չտալու
համար, իր երկար ու փաստակուռ խրատները
թեթեւ անհամբերութեամբ մը մտիկ ըրած էր
Սուրէն, հակառակ այն գորովալիւր սիրոյն
ու յարգալիւր վստահութեան զոր կը տածէր
իր հօրը հանդէպ: Իրեն այնպէս կը թուէր թէ
իր հայրը՝ հակառակ իր փաստաբանի երկա-
րամեայ փորձառութեանը՝ վախկոտի աչքե-
րով միայն կը նայէր աշխարհի վրայ ու թեթե-
ղարմանք մըն ալ չէր կրնար զսպել նաև որ,
հակառակ իր առած ուսումներուն, հա-
ղարուձէկ անձերու և ղէպքերու հետ շփման
մէջ՝ միշտ միեւնոյն վարանող, երկչոտ մարդը,

իր առջև գծուած նեղ արահետէն դուրս ոտք
կոխելէ սոսկացող, դանդաղ քայլերու ու-
նակութիւնը մոլութեան մը տանող, լայն
հորիզոններու բոլորովին կոյր անձը մնա-
ցած էր:

Ի՛նչ պիտի ուզէր հօրը ձեռքերը իրենին
մէջ առնելով, գլուխը ուսին, շուտ շուտ,
տեսակ մը աճապարանքով, որպէս զի մի
գուցէ ան կամ ինք բարկանայ, ըսել անոր.

— «Հայրիկ, չե՞ս տեսներ կոր միջակու-
թիւնը մեր վիճակին. չե՞ս զգար կոր այն
նուաստացումները որոնց օրն ի բուն, դուն,
մայրս, քոյրս, ես ստիպուած ենք գլուխ
ծռելու. այսչափ տարուան աշխատութիւն-
ներէդ վերջը ի՞նչ դիրք գրաւած ենք. քու
բաղմամբաստակ պարկեշտ փաստաբանի գործը

մեզի ապրեցնելէ ու սա մեր նստած տունը իւրացնելէ ու քանի մը հարիւր ոսկիէ ուրիշ ինչի՞ ծառայած է: Կարելի՞ է որ չտեսնես այն լայն, եռուն, շողշողուն կեանքը որ մեր աչքերուն տակը կընդլայնի, կը հրապուրէ, կը գինովցնէ: Ու մտածել թէ հարուստ ըլլալ բաւ է այդ ամէնուն տիրանալու համար. հարուստ ըլլալ. ատկէ՛ դիւրին ի՞նչ կայ. վստա՛հ եղիբ որ իմ կարողութեանս մէջն է հարուստ ըլլալ, հաղարներու տիրանալ. կը կարծես թէ այն ամէնքը որոնց անունները իրենց հետ ոսկիէ ճաճանչ մը կը թռնին տանիլ՝ պարզ առեւտուրով կամ փաստաքանու թեամբ կամ ատոնց նման կրիայաքայլ յամրն թաց գործերով եղած են: Ոչ, ոչ, իմ ներքին համոզումս, իմ փորձառութիւնս պիտի ըսէի— եթէ քսանըհինգ տարիներուս չափազանց յանդուգն չըլլար այդ բառը արտասանելս — կըսէինձ որ ոչ մէկը կրցած է հարստանալ առանց մեծապէս վտանգելու իր ունեցածն ու չունեցածը, առանց խաղալու, առանց սքեփել լասիոնի: Եւ երբ գրեթէ վստահ միջոցը ունիմ ձեռքս, հասնելու կատարին որուն ամէն մարդու պարսֆն է բաղձալ, մէկ ոստումով մեր քօղարկեալ աղքատութենէն հարուստներուն մեծագոռ փարթամութեանը հասնելու, դուն կը խրատես ինծի ետ կենալ, չեմ գիտեր ինչ հինցած, հոտած սկզբունքներու վրայ յենլով և կուզես որ ծիւրիմ ծթով այն վաճառականական տան մէջ ուր տասնըհինգ ոսկի ամսականի մը կրցի հասնիլ տասնամեայ ապերախտ ու ապուշցնող աշխատանքէ մը վերջ, և ճղճիմ ու ախմար խնայողութիւններով հաղիւ կրցայ հարիւր յիսուն ոսկուոյ պզտիկ գումար մը մէկդի ղնել... հարիւր յիսուն ոսկի՛...»:

Սուրէն կրնար երեւակայել այն արհամարհանքի շեշտը զոր պիտի ղնէր այդ երեք բառերը արտասանած միջոցին. հարիւր յիսուն ոսկի՛... ինչի՞ն պիտի օգտէր, Աստուած իմ, երբ՝ ինչպէս կը տենջար ընել՝ ձեռքը խնդրէր Ատրինէին, որուն համար ունեցած սէրը ահա՛ երեք տարիներէ ի վեր կ'աճէր օրէ օր: Սյդ գումարով էր կամ իր ամսականովն էր որ տուն տեղ պիտի չինէր,

ձմեռը Բերա, ամառը դիւղը պիտի անցընէր, Ատրինէին արդուգարդին պիտի հասնէր— ի՞նչ բեհեզներու մէջ չէր ուզեր տեսնել անկա: Հապա՛ այն առօրեայ ծախքերը որոնցմով պիտի գնէր այն պզտիկ հաճոյքները, որոնց գումարը կեանքի երջանկութիւնը կը կազմէ, կառքով ու նաւակով պտոյտներ, թատրոնի մէջ օթեակ մը, քմահաճոյքի մը գոհացումը...:

Ատրինէին անունն անգամ հերիք էր ջրնջելու այն թեթեւ խղճահարութիւնը զոր ունեցած էր պահ մը, հօրը համոզկեր ու գգուող խրատներուն ի լուր:

Միւս կողմէ, Արսէն էֆէնտի՝ հասկցաւ թէ մեծ տպաւորութիւն մը ըրած չէին իր խօսքերը աղուն մտքին վրայ. արդէն իր սէրը այնքան մեծ էր Սուրէնի վրայ որ որեւէ զոհողութեան առջև չպիտի կասէր՝ նոյն իսկ անարդար, նոյն իսկ մլասաբեր մէկ խնդրանքին առջև... չատոնց արդէն տեղի տուած պիտի ըլլար, եթէ Նուարդին՝ իր աղջկան՝ որ հաղիւ տանըհինգ տարեկան կար, ապագան ալ խնդրի տակ չըլլար: Քանի քանի անգամներ Սուրէնին թախանձանքին ունկնդրած պահուն փորձուեցաւ ելնել, երթալ ու հինգ հարիւր ոսկին բերելով անոր յանձնել ու ըսել.

«Ա՛ռ, տղաս, քուկդ է այս դրամը. կըզգամ թէ ամբողջ կեանքիս աշխատութիւնը քեզի համար է եղեր»:

Բայց միշտ ժխտոր մը կը հնչէր ակտնջին. ծանօթ, շատ ծանօթ ժխտոր մը որ սակայն սարսուռ մը կ'ազդէր իրեն. իր հայրական տկարութիւնը վայրկեան մը ևս կընդդիմանար. այդ ժխտոր լսած էր ինք միշտ՝ օրը քանի մը անգամ երբ Ղալաթիա, Քօմիսիոն իմանին առջեւէն կ'անցնէր իր սենեակը երթալու կամ անկէ՛ վերադառնալու համար. մինչև այս ատեն այլանդակ ձայներու պոռըտութէ մը աւելի բան մը չէր եկած իրեն. բայց այս պահուս իրեն այնպէս կը թուէր որ իր Սուրէնն էր որ կը բաժնէին, կը փետթէին, կը լսէին հոն, իր Սուրէնը ու իր Նուարդին. յատկացուած դրամօժիտը, այդ աղմուկը զրօսեցուցիչ ըլլալէ կը դադրէր յան-

կարծ, սպառնական, դիւային, գեհնային երեւոյթներ կ'առնէր. ու չէր կրնար հասկընալ թէ ինչպէ՛ս իր հարազատը, իր արիւնէն, իր մտէն, իր ջիւղերէն կազմուած այդ տղան պիտի համարձակէր մօտենալ այդ ձայնին, առանց երկիւղի, առանց սարսուռի:

Սուրէն կըզգար թէ շուտով պիտի հասնէր նպատակին քիչ մը աւելի ստիպումով. լուռ կը մնար իր շարժառիթներուն մասին, որոնք սակայն միշտ ներկայ էին մտքին մէջ, այլ միայն չլացուցիչ յաջողութեան մը հեռապատկերը կը ցոլացնէր հօրը աչքին, կը պնդէր իր կարծիքներուն ճշգրտութեանը վրայ ու մանրամասնութիւններու մէջ կը մտնէր, օտար քաղաքականութեան վրայ կը ճառէր, երիտասարդի մը տրուած վստահութեամբ. Ռուսական—Ճաբոնական պատերազմին մօտալուծադմանը մասին տարակոյսի ստուերն անգամ չունէր, ու իբր հետեւանք կը գուշակէր ամէն տեսակ արժեթուղիներու վրայ մեծկակ անկում մը.

— Բաց ծախել, հայրիկ, բաց ծախել. հազարաւոր օսկիներ չիսել բան մը չէ, կը կրկնէր համոզկեր չեչտերով:

Արսէն էֆէնտի հիացումի պէս բան մըն ալ կըզգար Սուրէնի այս պերճախօս հմուտութեանը վրայ ու հազարներու ցնորքը անոր ալ գլուխը կըսկսէր դարձնել:

— Ո՛վ գիտէ, բազդ է աս, կ'ըսէր ինքնիրեն:

— Վաճառականական հաշիւ մը դուռ, կը յաւելուր Սուրէն:

— Սուրէն միշտ լաւ հաշուադէտ մը եղած է, կը շարունակէր. խորհիլ Արսէն աղա որ իր կէս—յաջող փաստաբանի ասպարէզին մէջ կոյր չէր մնացած իր իսկ բազմաթիւ թերութիւններուն:

— Կսի՛ք ըլլալու է, հայրիկ, անկարելի՛ է որ մարդ կորսնցնէ...:

Ինչ որ կը ծածկէր հօրմէն, այն կորուստն էր զոր երկու շարաթուան մէջ կրած էր ինք սակարանը. իր ամբողջ հարիւր յիսուն օսկին անհետացած էր քօնսօլիտներու բարձրացումի մը մէջ ու այն ստակը զոր ձեռք անցընել կը ջանար հիմայ, դիմանալու համար էր,

վստահ թէ օր մը, և շատ մօտեւս, ակնկալուած գիներու անկումը յառաջ պիտի գար:

— Հապա պատերազմ չըլլա՞յ նէ, վերջին առարկութիւն մըն ալ ուղեց ընել Սատափեան էֆէնտի:

— Վստահ եմ որ պատերազմը տեղի պիտի ունենայ, վստահ, վստահ... կրկնեց Սուրէն այնպիսի չեչտով մը որ ցրուեց հօրը ամէն վարանումները ու պարզապէս իր նահանջը քողարկելու համար և ինքն իսկ ապագային սխալ ելնելու յոյսով էր որ վերջացուց խօսակցութիւնը.

— Սխալ ճամբայ կը բռնես կոր, տղաս...:

Միայն, երբ դրամը տղուն յանձնեց, աչքերը արցունքով լեցուեցան ու արտուր ձայնով մը.

— Սուրէ՛ն, այս ստակը Նուարդինն է, մի՛ մոռնար. այսչափ տարուան աշխատութիւնով հազիւ կրցի այսչափը իրար բերել... մօրդ ալ բան մի՛ ըսեր... Աստուած հետդ ըլլայ:

Սուրէնի ձեռքը դողդղաց ու վարանում մը ունեցաւ. հօրը այդ բառերը իր երեւակայութիւնը խթանեցին: Կարծեց տեսնել մայրը՝ որ իր քրոջ ծննդնէն ի վեր հիւանդ տարիներով անկարող դարձած էր քալելու. տեսաւ անոր նուաղկոտ, ցաւոտ աչքերը որոնք յանդիմանութիւն մը կ'ուղղէին իրեն. տեսաւ Նուարդը, մեծցած, անտէր, անկար, որ իրմէ հաշիւ կը պահանջէր իր կործանած ապագային համար... Ետ տալ այդ դրամը, հեռանալ սակարանէն, շահէն ու կորուստէն, տենդէն, արշիւղէն ու ցաւերէն, ու թողուլ այդ ծերունիին՝ վայելքը այդ ճգով ու արքնութեամբ հաւաքուած դրամին... այս աղուոր մտածումը ունեցաւ: Բայց իր համոզման վստահութիւնը գինիի շողիին պէս պատեց ուղեղն անգամ մըն ալ. յանցանք գտաւ իր ջղայինի խառնուածքին որ իր տղայութենէն ի վեր վախկոտ մը ըրած էր զինքը, վախկոտութիւն մը զոր հօրմէն ժառանգած էր և որուն պէտք էր յաղթել ոչ և է եղանակաւ:

«Հոգ մի՛ ըներ, հայրիկ» մրմուլով դուրս ելաւ. միայն թէ դուռը չգոցած՝ լսեց ան-

գամ մըն ալ հօրը յուզմունքէ թրթռուն ձայնը որ կը կրկնէր .

— Նուարդին ստակն է ատ, տղաս, մի՛ մոռնար . . . :

Բ .

Ծայրագոյն Արեւելքի հսկայ պատերազմը կանխող երկար, տարօրինակ, առեղծուածային բանազնացութիւններու միջոցն էր . պաշտօնական և ոչ—պաշտօնական լուրերու տեղատարափ մը Բեդերսպուրկէն ու Թոքիոյէն . ճգնաժամի մը վախին կը յաջորդէր խաղաղութեան վստահութիւնը, և ևս երբ մութին մէջ վաղուան աղէտը կը պատրաստուէր, ասդին, աշխարհիս չորս անկիւնները, ամէն խոշոր քաղաքներու ծոցը, դրամի ու շահու տենդով վառուած աչքեր կը յառէին այդ աղջամուղջին վրայ՝ կորզելու համար անոր գաղտնիքը ու անհանդարտ մտքեր ապաղայ յաջողութիւններու դղեալումներ կերեւակայէին կամ անակնկալ սընանկութիւններէ կը սոսկային : Իրիկուան թերթերուն մէջէն միայն սակացոյցներու հետեւողին՝ դրամական հրապարակներու այս գրգռումը շատ զգալի չպիտի ըլլար, բայց անոր որ սակարանի մը դռնէն ներս ոտք պիտի կոխէր՝ անկարելի պիտի ըլլար չնըմարել թէ անօրինակ յուզում մը կը տիրէր հոն :

Արսէն էֆէնտի անգամ մը ուղեց փորձը ընել, Սուրէնի հետ ունեցած խօսակցութենէն քանի մը օր վերջը . ժամը ութին ատենները, զգուշութեամբ ներս մտաւ Քօմիսիօն Խանի դռնէն, որոշած ըլլալով վեր ելնել մինչև սակարանին դուռը . բայց իշաչքերուն առջև պարզուած տեսարանը կաշկանդեց իր ամէն մէկ շարժումը . խանին բակին մէջ մեծ թուով մարդիկ, ոմանք գլուխին բաց, ուրիշներ գոյն գոյն պէս պէս գլխարկներով, ոտքի կեցած, այլանդակ շարժուածներով, բերանի տղեղ ծամածուծութիւններով, կոկորդալիլ ու միահամուռ, բառեր, թիւեր կը պօռային . մինչ լիւրի յարկերէն, որոնք բակին վրայ նայող երկաթէ ծնօտով մը շրջապատուած նրբանցքներ կը կաղմէին, կարդով, կէս մէջքերնէն

վար կախուած, նմանօրինակ մարդիկ, միեւնոյն այլանդակ շարժումներով ու միեւնոյն ճիւղային պուշտուքներով կը վերադարձնէին վարիններուն բառերն ու թիւերը : Արսէն էֆէնտի առաջին տպաւորութիւնը ան եղաւ որ երկու կուսակցութիւններու կռիւի մը ներկայ կը գտնուէր, որ հայհօյանքներով սկսած ըլլար . ու կը վախնար որ ամէն մէկ բոպէի, խօսքով չբաւականանալով՝ սկսէին իրարու ֆիզիքական վնասներ հասցնել . չպիտի դարմանար եթէ վերէն յանկարծ ապակիի կտորներ, լիմոնի կեղեւներ, ու ասոր նման խոցող, աղտոտող, նախատող նետերու տեղատարափ մը թափէր վրա : Ու յանկարծ, աչքերը ինկան իր իսկ աղուն վրայ, Սուրէնին որ վերը, երկրորդ նըրբանցքին մէջ, երկաթորմին հաղիւ յենած, գլխարկը դէպ ի ետեւ նետած՝ ակնապիշ կը նայէր իրեն դիմացի դրան վրայ գտնուող ապակիներուն . ասոնց ետին երկու դոյզ թուանշան կերեւէին, իրարու վրայ, որոնց վերի դոյզը շարունակական . . . վարինը երբեմնակի փոփոխութիւններ կ'ունենար :

« Տղա՛ս, տղաս . . . » մրմնջեց Արսէն էֆէնտի դուրբուրանքի շեշտով մը, չորցած կօկորդէն հաղիւ կրնալով այդ բառերը հանել ու սիրտը փղձկեցաւ :

Իր Սուրէնն էր ան, որուն ժպիտը տան զարդն էր, որուն չնորհալի ձեւերը ծնողքին հրճուանքն էին . հակառակ ցուրա ու խոնաօղին, առանց վերադգեստի կեցած, աշխարհիս մէջ ամէն բան մոռցած ըլլալ կը թուէր, բացի այն թուանշաններէն սրոնք իրենց խորհրդաւոր ու սուրսուրող պարը կը շարունակէին աղտոտած ու կէս թափանցիկ ապակիներուն ետեւէն : Աչքերուն փայլն իսկ վախ մը աղդեց հօրը . իրենց քաղցր, յանկուցիչ ձգողութիւնը չունէին անոնք, այլ պողպատի կարծր փայլը արեւին տակ . ճակտին վրայ երկու խոշոր երակներ դուրս ցցուած էին կապոյտ ու տղեղ . դժգոյն մորթը դէմքին վրայ պրկուած էր իր բացլսփիկ շուրթներուն շուրջը . այդ վայրկենին սուրճի դաւաթ մը ներկայացուցին իրեն զոր առաւ մեքենաբար, ու հայրը կրցաւ նշմարել թէ դաւաթը զգալաբար կը գողգողայ մատներուն ծայրը :

«Տղա՛ս, տղա՛ս» կմկմայ հայրը նորէն, ու փորձուեցաւ վեր վազել, թեւերուն մէջ առնել իր սիրասունը, ու հեռացնել զայն այդ շրջանակէն. բայց նոր ու աւելի ուժգին վլվլուկ մը, սակարանին դռնէն դուրս ելնող խաժամուժ հոսանքը տեսակ մը վախ աղբեցնի իրեն, ու հապճեպով դուրս ելաւ այդ շէնքէն՝ վստահ թէ իրիկուն իրեն պիտի բերէին իր գաւազը կործանած, ձմրուած, խոցուած, միանգամայն զգալով թէ անկարող էր ինք այդ աղէտը արգիլելու...:

Ընդհակառակը, սակայն, այդ օրը Սուրէնի յաղթանակի օրն էր. իր կանխատեսութիւնները ճիշդ էին: Բեղերսպուրկէն յոռետես հեռագիրներ հրապարակին վրայ ճնշում կը բանեցնէին... գիներու անկում մը կըսէին: Անոնք որ ցարդ լաւատեսներ եղած էին, կը փութային իրենց դնումները ծախել ու օրուան մէջ քօնսօլիտէներու վրայ 3 դրուշի նուազում մը տեղի ունեցած էր. արգէն խկ իր նախկին կորուստները վերստատացած ու անոր գրեթէ հաւասար գումար մըն ալ շահած էր:

Անմոռանալի օր մը պիտի ըլլար ատիկա Սուրէնին, օրը ուր իր հեռատես հանճարը գիտցած էր դէպքերու ընթացքը նախատեսել, ուր լայն նայուածքով մը կրցած էր ըմբռնել առաջային մանուածապատ գնացքը: Վայրկենական փոփոխութիւններու յոյզէն ազատած քիչ մը, կը ջանար կարգ մը դնել իր մտածումներուն մէջ. ճակատը ու ձեռքերը կ'այրէին. բայց անպարագրելի թեթեւութիւն մը կար հոգիին մէջ. խօսելու, խնդալու, կատակելու խօլ փափաք մը ունէր, քիչ մըն ալ յոխորտալու պէտքը: «Նա քեզի չըսի՞ մի» բառերը յաճախ արտասանեց ատոր, անոր՝ դուրս խուճապող ա'ր'ոյին մէջ: Անոնցմէ մէկին մանաւանդ վայրաշ գոհունակութիւն մը կըզգար կրկնելու այդ բառերը. Բիւզանդաղա շատոնց հօսիք մը եղած էր, միշտ բարձրացում կ'ափնկալէր, տիկնալում որ իրականացած էր ցարդ, տանելով Սուրէնին խեղճ դրամագլուխը. հիմա Սուրէնի կարգն էր իր վրէժը լուծելու և անտարբեր Բիւզանդաղայի կորուստին, կը ծաղրէր անիկա, ինչ-

պէս ծաղրուած էր անկէ քանի անգամներ:

«Սպասէ, սպասէ, — եղաւ Բիւզանդաղայի պատասխանը, — վերջն է գովելին, դուն տահա ջօճուիս ես...». ու արագ արագ հեռացաւ, սիկառ մը բերանը, հովանոցը թեւին տակ:

Երբ շուրջը պարպուած տեսաւ, Սուրէն ալ մտաբերեց թէ Գատըգիւղ տուն երթալու ժամանակը եկած էր. այն ատեն միայն անդրադարձաւ որ նոյն օրը գործատեղին ոտք չէր կոխած, ու երեւակայեց հետեւեալ օրը իր վարպետին քացիած երեսը. բայց օրուան մեծ յաջողութիւնը այդպիսի պզտիկ անպատեհութիւններու նշանակութիւնը զերօրի կ'իջեցնէր... վաղն ալ չպիտի երթար, միւս օր ալ. յետոյ հարկաւ պատրուակ մը կը գտնէր. արգէն պէտք պիտի ունենա՞ր բնաւ հոն վերադառնալու հիմայ որ բաղդին սանձը ձեռք անցուցած էր. վստահ չէ՞ր որ վաղն ալ միւս օր ալ իր շահերը պիտի կրկնապատկէին, եւ ապատկէին, ու տասնապատկէին. երեւակայութիւնը կ'ոլորտկէր թուանշաններու ամենի լափերին թօսի մը մէջ. մտքով վազելու, սուրալու իրական տպաւորութիւնը ունէր. կըզգար թէ բաղդին վրայ հեծած կը թռէր հիմայ, սրունգներուն մէջ անոր թըրթուումը զգալով, կուրծքը ուռած, ուռնագերը բաց, թեւերով աշխարհը գրկել կը թուէր...:

Գիշերը բարեկամի մը տուն գնաց բօքէն մը «դարձնելու» համար. տեսակ մը դողով ձեռք գպցուց թուղթերուն, հաւատքը ունէր թէ այդ գիշեր թղթախաղի մէջ յաջողութիւն մը հետեւեալ օրուան համար վստահաբար յաջողութիւն կը նշանակէր, ու կը վախճար որ մի' գուցէ բաղդը յանկարծ հեռանար իրմէ. սակայն շուտով գտաւ իր զուարթութիւնը, շահի գիշերն էր ատիկա. հետզհետէ յաջող կ'երթար խաղը իրեն, եւ կարծես անտեսանելի ու անսխալ մասէ մը առաջնորդուած՝ խրոխտ ինքնալստահութեամբ մը ամէնէն աններելի պլրնները կը յաջողցնէր, վախ ու յուսահատութիւն սրտի-ռելով շուրջը...:

Առաւօտեան դէմ, երբ տուն վերադար-

ձաւ, հօրը սենեակին առջև կանգ առաւ ըսպէ մը ու ժպտաւ մը մտածեց հօրը ուրախութեանը երբ իրեն պիտի վճարէր փոխ առած գումարին կրկնապատիկը. քրոջը սենեակին առջև սիրոյ պոռթկում մը ունեցաւ. «աղուոր, աղուոր քոյրս» մրմռաց հպարտութեամբ... այդ գիշերը քուն չընացաւ:

Հետեւեալ երկու օրերուն մէջ, Սուրէնի չահերը կ'աճէին. քնաւ չէր խորհէր գոհանալ այդ քանով, ընդհակառակը անվեհեր կը կրկնապատկեր իր ծախած արժեթուղթերուն թիւը. արդէն իսկ չահերը հազարներով կը հաշուէր, բայց կուգէր եռապատկել ատիկայ. հնգապատկել, ու յետոյ... ու յետոյ... Լէյն, աղուոր, անսահման երազները. ալ ամէն ուրիշ մտածում հեռացած էր Սուրէնէն. Ասորինէն իսկ ամպի մը մէջէն կ'երևար. իրաւ, ապագային երազներուն մէջ միշտ տեղ մը ունէր ան, անոր էր որ սանկ պիտի ըսէր, ան էր որ սանկ պիտի երեւար. սանկ պիտի խօսէր, բայց միշտ երազներուն կեդրոնը ինքն էր, աշխարհքին իսկ առանցքը ինքն էր. ամէն ուրիշ անձ ու իր, իրենց կարեւորութեան աստիճանին համեմատ աւելի մօտէն կամ աւելի հեռուէն իր շուրջը կը բոլորէին... Իր անձնավստահութիւնն էր որ մանաւանդ խոշոր համեմատութիւններ կ'առնէր. կտրուկ, հաստատական նախադասութիւններ կ'երնէին յաճախ բերնէն, ինքզինքը ուրիշներէն գերադասց կը դասէր, կորսնցնողներուն յուսահատ դէմքերուն հանդէպ արհամարհոտ անհամբերութեան շարժում մը կ'ունենար.

«Տխմարներ որ կանխատեսած չէին ... ինչպէ՞ս կարելի էր չշահիլ»:

Ու համոզումը ունէր թէ երբեք, երբեք չպիտի կորսնցնէր ինք...:

Գ.

Բեղերսպուրկէ նոր հեռագիր մը խաղաղութեան յոյսը տուաւ. հրապարակը պզտիկ բարւոքում մը ունեցաւ ու Սուրէն չահերուն մէկ փոքր մասը կորսնցուց.

«Պահ, առժամանակեայ բարձրացում մը, մտածեց, դիւանագիտական խաղ մը»:

Նոյն իրիկունը բօքէսի մէջ ալ կորսնցուց

քանի մը ոսկի. այս աննշան կորուստը աւելի ազդեց իրեն՝ քան օրուան շատ աւելի մեծ կակ գումարը: Սկսաւ անհանգիստ ըլլալ, բայց անկարող էր հաւատալու թէ սխալած կրնար ըլլալ ինք: Հետեւեալ օրը իր շահուն մէկ մասն ալ գնաց, և այսպէս տասնեակ մը օրեր հրապարակը թելել բարձրացումներ կ'ունենար. այս փոփոխութիւնները կը ջլատէին Սուրէնը. կը մաղթէր սակարանական մեծ շարժումներ: «Շահ թէ կորուստ, կը մտածէր, ինչ փոյթ, հերիք է որ Սակարանին մէջ շարժում ըլլայ, շարժում, կեանք...». բայց կամաց կամաց շահը կը պակսէր: Իր գործողութիւններուն քանակը այնքան բաղամապատկած էր որ ամենադոյզն փոփոխութիւնը բաւական կարեւոր տարբերութիւն մը առաջ կը բերէր. իրաւ է թէ հրա աշխարհակուած անկումը գար, այն ատեն ինչ խոշոր շահ մը պիտի ունենար:

Օր մը սակայն, ծանուցուեցաւ թէ Ռուսիա իր վերջնական պատասխանը զրկած էր Ճաքոնի, որուն մէջ մեծ զիջումներ կը խոստանար. իսկոյն նոր կենդանութիւն մը ստացան արժեթուղթերը, վայրկեանէ վայրկեան գինները վրայ կը դնէին, գնողներու թիւերը իր շատնային, մինչ ծախողները կը փութային գոցել իրենց հաշիւները. Սուրէն միայն կը յամառէր իր կարծիքին մէջ. բայց այդ շարաշուք օրուան վերջը երբ հաշիւները փակեց, տեսաւ թէ ոչ միայն ամբողջ չահերը վրայ տուած էր, այլ և իր փոքրիկ դրամագլուխը ու փոխ առած ստակէն ալ հարիւր ոսկի... ընդ ամէնը չորս հարիւր ոսկին մնացած էր:

Խուլ ու կատաղի բարկութիւն մը արագաւ իրեն. այսչափ շահէ վերջ այս վիճակին հասնիլ. հաւատալի չէր թուէր ասիկա իրեն. սխալ քան մը կար, կարելի էր որ բաղդը երես դարձուցած ըլլար իրեն: Բնազդային հաւատք մը ունէր թէ միշտ յաջող պիտի ելնէր ինք, թէ երբեք ձախողութեան չպիտի ունենար, ու այս գաղափարը սփոփանք մը եղաւ վայրկեան մը. սակայն կրկին իրաց ներկայ վիճակը կը ներկայանար. հերիք չէր որ իր ստակը կորսնցնէր, իր հօրը դրամէն ալ մաս մը վրայ տուած էր, կրկին անհաւատալի

թուեցաւ իրեն որ այսպիսի բան մը կարելի ըլլար, մանաւանդ իրեն. պիտի ուզէր մէկուն խոստովանիլ, սիրտը թեթեւցնել, բաղդը անիծել, համակրութեան բառ մը լսել, բայց իր եսասիրութիւնը ետ մղեց այդ տկարի փափաքը: Արդէն վաղը ամէն բան կարգի պիտի մտնէր, այս օրը մղձաւանջի մը պէս պիտի անհետանար. վաղը, ահ, մոգական բառը, յոյսերով բեղուն, գաղտնիքով լեցուն բառը, վաղը, յաւիտենական առեղծուածը, վաղը պիտի յարդարէ ամէն դժուարութիւն, պիտի ուղղէ ամէն սխալ, պիտի բուժէ ամէն ցաւ. վաղը Ժպիտը պիտի բերէ ու արեւը ու կեանքը. ամէն անոնք որոնք «այսօր»ը ձախողը կը գտնեն՝ վաղուան կը դառնան. ամէն անոնք որոնք իրենց դրամական գործառնութեանց մէջ ունայն երազներով կ'ապրին՝ վաղուան վրայ կը հաշուեն ու քանի «վաղ»եր «այսօր» կ'ըլլան ու դեռ «վաղ»երու կըստասեն անոնք...

Նոյն իրիկունը կրկին բօքքըրի սեղանին չորջը կը գտնէր ինքզինքը Սուրէն. հիմա իրեն սովորութիւն մը դարձած էր թղթախաղը. կեանքը այն ատեն միայն կըսկսէր երբ խաղալու տենդը կը վազէր երակներուն մէջ, այն ժամերը, ուր շահու յոյսը, կորուստի վախը ակնկալման զրկումը չունէր, մահուան ժամեր էին. իր տան մէջ ծնողաց հանդարտ կեանքը արտողութիւն մը կը թուէր. այն բարեկամները որոնց հետ օրերով շարաթնեւրով, առանց խոնջէնքի կըրցած էր գրականութեան, երաժշտութեան, արուեստի վրայ վիճաբանիլ, անհամ ու անտանելի կը դառնային. բնութեան հրաշալիքները նշանակութիւններ կորսնցուցած էին իրեն համար: Միայն գակարանը, բաղդի սեղանը հրապոյր մը ունէին ու սոսկ այն բարեկամները որոնց հետ կրնար *converser*, *discuter*, *parler* խօսիլ:

Այդ իրիկունը դիպուածաւ Բիւզանդ աղան մէկն էր իր խաղի ընկերներէն, նոյն Բիւզանդ աղան որ երկու շաբաթ է ի վեր յարատեւ բաղդը ունեցած էր շահելու. Չղային մըն ալ ան, բարձրահասակ, քառասունոց մէկը, սև մազերով, սև պիսիւրով, սև շրջանակող մօրուքով մը, սեւութիւն մը գոր կը շնչտէին

ալ աւելի թուլս մորթ մը ու սև քթթացող աչքեր. ամէն վայրկեան արտեւանունքը Չղային կծկումներ կունենային, ու հակառակ իր ջանքին՝ անայլայլ երեւալու, կորուստի կամ շահու պահուն խրոխտ ու անտարբեր ճակատ մը ցցունելու, ամէն բան իր մէջը խոր անհանդարտութիւն մը կը մատնէր:

Սուրէն անոր յաջողութեան ի տես կատաղութիւն մը կը զգար, ու ինչ անբացատրելի տրամաբանական օրէնքով իր ձախողութեան պատասխանատուութիւնը մասամբ անոր կը վերագրէր: Վայրագ գոհունակութեամբ մըն էր որ դիմացը նստեցաւ այդ գիշեր, տեսակ մը մարդասպանի գոհունակութիւն, մարդասպանի մը որ կը հրճուի իր զոհը իր առջև, ձեռքի տակ տեսնելով: Միայն թէ բաղդին հալածանքը հոտ ալ կը շարունակուէր. առջի ձեռքէն իսկ Սուրէն ու Բիւզանդ աղա մաքառում մը ունեցան, ու Սուրէն ստիպուեցաւ տուժել միւսին թուղթերուն գերադանցութեան հետեւանքով: Տարօրինակ ու կարծես գիտակից յամառութեամբ մը բաղդը կը հարուածէր զինքը: Մէկիկ մէկիկ ոսկիները կը նետէր սեղանին վրայ, ու անոնց հալիլը հատնիլը կը տեսնէր ակնթարթի մը մէջ. իրաւ է թէ միւս երկու ընկերներն ալ յաջող էին, բայց Բիւզանդ աղան էր որ շահին առիւծի բաժինը կունենար: Սուրէն կուրծքին տակը կը զգար պտուտկող մորիկ մը որ կըսպառնար թոքերը պայթելու, կողերը դուրս ցայտեցնելու, որուն կը յաջողէր ընկճում մը, վհատում, արտասուելու, «խեղճ ընել»ու փափաք մը: Ուղեց բաղդին հակառակ երթալ, խոշոր սխալներ գործեց ու կորսնցուց միշտ. վերջապէս մեծ հարուած մը կարծեց տալ և մեծ շահ մը ձեռք բերել երբ քառակ միաւորներ (as) ունեցած պահուն ընդդիմութիւն գտաւ Բիւզանդ աղայի կողմէ:

—Votre reste, պոռաց անոր:

--Flush royal, պատասխանեց անիկա, իր գերադանց թուղթերը բանալով:

Սուրէն ոտքի ցատկեց յանկարծ, ու ձեռքի թուղթերը անոր գլխուն նետելով, ուսերէն բռնած՝ երեսն ի վեր:

«էշէկ, էշէկ, էշէկ» դռնաց, յուսահատ, ինքնիրմէն ելած: Վայրկեան մը, Բիւզանդադայի աչքերուն փայլատակիլը տեսաւ, ու կրցաւ նշմարել թէ բարկութիւնը կը շեղեցնէր անոր բիրերը, տարօրինակ զգայութիւնը ունեցաւ դիտելու թէ մարդուն ամբողջ խմորը, նկարագրի նենգութիւնը իր բարկութեան մէկ բոլորէն, այդ աչքերու շիւթութեան մէջ երեւան կուգար, միեւնոյն պահուն իր արարքին ալ տխմարութիւնը ու աղտոտութիւնը զգաց, ու բնազդաբար, անգիտակցօրէն ու բարձրաձայն.

«Լալս կուգայ կոր, լալս կուգայ կոր» կրկնեց ու դուռն հետուեցաւ տունէն, հրահրած ճակատը արեւմուտքէն փչող հովին տալով: Ինքզինքին դէմ, բազդին դէմ, աշխարհիս դէմ սիւքօքալան զայրոյթ մը կը զգար ու միանգամայն անորակելի միտակութիւն մը, ինքզինքը ամէնէն լքուած, ամէնէն մոռցուած կը տեսնէր. այն մատը որ ցարդ իրեն ուղին ցոյց տուած էր, անհետ եղած էր այլեւս: Կուգէր լալ, ինքզինքը նախատել, խոշտանգել, տարտամ յոյսով մը թէ վերին նախախնամութիւն մը պիտի գթար իրեն... ու քիչ մը վերջ կրկին ինքզինքը կը կշտամբէր այդ յիմար յոյսին համար:

Ու զղջումները կը յաջորդէին իրարու. կը զղջար սակարանին դռնէն ներս ոտք կոխելուն, կը զղջար ստակով թուղթ խաղալուն, ու մտածելով քանի մը օր առաջուան յաջողութիւնը, կը զղջար ատենին կասած չըլլալուն, եթէ չաբաթ մը առաջ միայն քաշուած ըլլար. չէ, երեք օր առաջ, երկու օր, նոյն խկ այդ առաւօտուն...:

«Անվեհեր դէմ զնենք փոթորկին» որոշեց, տանը ճամբան բռնելով, ու ջանաց պաղարեւութեամբ նկատել իրաց վիճակը: Ի՞նչ օգուտ բազդին հակառակելէն. պէտք էր հետեւիլ անոր. ակներև էր որ Բիւզանդադան էր հիմայ բազդին սիրասունը, ինքն ալ իր քաթքիքը պիտի փոխէր, անոր պիտի հետեւէր:

Իր խռովեալ քունին մէջ նշանակալից երազ մը ունեցաւ. լեռնէ մը վեր կ'ենէին ինք ու Բիւզանդադան, ու յանկարծ դետինը

տեղի կուտար. ու ինք կը սահէր հը սուզէր վար, վար, անդնդի մը մէջ, մինչ իր ճամբու ընկերը գերբնային ուժով մը վեր կը բարձրանար, վեր, վեր, ու Սուրէնի ամբողջ օգնութեան ճիչերը, պաղատանքի ձեւերը ապարդիւն կը մնային: Անկողնէն ելած պահուն, որոշեց իր բաց ծախածները գոցել ու նոյնքան քանակ մը գնել:

Տունէն մեկնելու պահուն, նամակ մը տուին իրեն. իր վարպետէն էր որ իր բացակայութիւնը ու խաղամոլութիւնը պատճառ բռնելով, կը գիտցնէր թէ իրեն պէտք չէր մնացած այլեւս. այդ լուրը թէպէտ ակնկալուած՝ շատ տխուր կերպով աղդեց: Դուռն ելնելուն, առաջին հանդիպումը քահանայ մը եղաւ, ու Սուրէնին տխրութիւնը աճեցաւ. ծովու վրայ տիրող մառախուղն ալ նուազ չարաչուք նշան մը չնկատեց, բայց դեռ կամուրջ չհասած՝ արեւը կը պատռէր, կը ցրուէր ջուրին երեսը տատանող շոգիները ու այս պարագայէն նպաստաւոր հետեւութիւն մը հանեց. յայտնի էր թէ յաջողութեան արեւը իրեն ալ պիտի ժպտէր դարձեալ, երբոր իր առած սխալ քայլը ուղղէր. ու այս վստահութեամբ էր որ Քոմի-ժոն Խանէն ներս մտաւ այդ առաւօտ:

Շ. ՇՍԻՍՏՐԵ

(Բ. Եւ վերջին մասը յաջորդով)

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Նաւերու համար նորագիւտ ազդարար մեքենայ մը: Որ ձայնակամ ալիքներով կը գործէ:

Յորմէհետէ Ռուսեւճարոն պատերազմը սկսած է, դիտուններու կողմէ պատերազմական նաւերու համար կատարելագործութիւններ կը ծրագրուին, վերաւորիչ ղէնքերու և թնդանօթներու նորանոր զրութիւններ կը փորձուին, ռազմագիտութեան օժանդակելու նպատակաւ ծովու և ցամաքի վրայ հաղորդակցութեան միջոցին արդէն հնարուած գիւտեր կիրարկութեան կը մտնեն:

Անշուշտ ամէն մարդ կը յիշէ ճարտնցի-
ներուն առաջին յարձակումը Ռուսականին
վրայ, որ մեծամեծ վիսաներ պատճառեց.
Ռուսերը թշնամի նաւերուն մօտենալը չէին
իմացած և գիշերանց անակնկալի մը առջև
գտան ինքզինքնին: Նմանօրինակ անակնկալ-
ներու առաջը առնելու նպատակաւ, կ'եր-
եւի, Տօքթ. Ժ. Շայսլէր, նաւերու և մա-
նաւանդ մարտանաւերու մէջ գործածուելու
համար, նոր դրութեամբ մեքենական կազ-
մած մը հնարած է, — ինչպէս կը գրէ l'Elec-
tricien գիտական շաբաթաթերթը, — որ կը
գործէ ջուրին մէջ յառաջ եկած ձայնական
ալիքներու ազդեցութեամբ և որ կատարեալ
ճշդութեամբ կ'ազդարարէ նաւուն նաւաղ-
ներուն և հրամատարին թէ սա՛չափ հեռա-
ւորութեամբ նաւ մը կը գտնուի մօտերը,
թէ սա ի՛նչ ուղղութեան վրայ կը յառաջա-
նայ այն և թէ մերձաւորապէս սա՛չափ է
անոր ընթացքին արագութիւնը: Այս մեքե-
նային շնորհիւ, մշուշի, փոթորկի և գիշեր
ժամանակ նաւերու ընդհարմանց առաջը
կ'առնուի, մա՛նաւանդ նեղ ջրանցքներու,
նեղուցներու մէջ: Ինչպէս ըսինք, գործիքը
կը գործէ ջուրին մէջ ո և է պատճառաւ
գոյութիւն առնող աղմուկէ մը կամ գիտա-
կան բացատրութեամբ՝ ձայնական ալիքներու
միջոցաւ, որոնք, ինչպէս օդին, նոյնպէս և
ջուրին մէջ մեծ արագութեամբ կը սուրան,
օդին և ջուրին հաղորդական ըլլալուն պատ-
ճառաւ: Ախ, սա չարածճի ալիքները,
եղեկարական կամ ձայնական, որքան մեծ
ծառայութիւններ կը մատուցանեն մարդուն
ի հեճո՞ղս ծովային ալիքներուն...

Տօքթ. Շայսլէրի այս մեքենան, գլխա-
ւորաբար երկու մասերէ կը բաղկանայ. ըն-
կալուչը (récepteur) և աղբարարը (aver-
tisseur): Առաջին մասը ծովուն մէջ ընկըղ-
մած է և երկրորդը նաւուն կամրջակին վրայ,
նաւապետին մօտերը հաստատուած է: Գոր-
ծիքին այս երկու մասերը իրարու հետ կը
հաղորդակցին հեռագրական ձկուն պարանի
մը միջոցաւ (câble):

Ընկալուչ գործիքը գլանաձև տուփ մըն
է՝ յղկուած մետաղէ շինուած, որ կրնայ դի-

մանալ ծովու ջուրին աւերիչ ազդեցութեանց
և կը կրէ իր վրայ 9, 17 և պարագային
համեմատ աւելի երկայն խողովակաձև ծակեր՝
ճիշդ շրջանակի մը շառաւիղներուն դիրքով
դետեղուած: Այս ծակերը՝ դարձեալ յղկուած
մետաղեայ փողի մը միջոցաւ կը հաղորդակցին՝
վերի կողմը նոյնպէս փողանման իսկ վարի
ծայրը խորանարդաձև տուփի մը հետ, որ
յղկուած և հերմետապէս գոցուած ըլլալով՝
կաղերը փախուստ չեն կրնար ունենալ անկէ:
Ձայնաբեր խողովակները, որոնք պողպատ-
եայ(*) առաձգական գլաններ են, այս տու-
փին մէջ կ'երկարին՝ անոր փողաձև մասէն:
Գլաններուն ճիշդ դէմը մետաղեայ առաձգա-
կան թերթ մը կայ, մեկուսացած, որ ելեկ-
տրական բարդի մը մէկ բեւեռին հետ կապ-
ուած է. թերթին ետին ալ բարդին միւս
բեւեռը հաստատուած է փոքրիկ պտուտակով
մը: Երբ գործիքը չի գործեր, պատճառն
այն է որ ելեկտրական հոսանքը չէ հաստա-
տուած, և մետաղեայ թերթը մեկուսացած կը
մնայ: Բարդերը կը գտնուին Աղբարար գոր-
ծիքին բաժնին մէջ, ուր թելերուն ընդհա-
տումներուն տեղերը հաստատուած են ելեկ-
տրամագնիսներ (électro-aimant) և զան-
գակներ: Վերը, նաւուն մէջ, աղբարարին
ջուրջը կան այնչափ բարդ ու եղեկարամագ-
նիս (կարծաւ), որչափ որ ձայնաբեր խողո-
վակներ կան ընկալուչին մէջ:

Արդ, ենթադրենք թէ նաւու մը մէջն
ենք, ու, մշուշի ատեն, հեռուէն ուրիշ նաւ
մը մօտենալու վրայ է. նաւուն պտուտակին
կամ անիւին արտադրած կանոնաւոր աղմուկը
ջուրին մէջ և կամ ուրիշ որ և է աղմուկ որ
ծովուն մէջ առաջ կուգայ մեծ ձուկերու
կամ ծովային գազաններու լողալէն, կը
հաղորդուի գործիքին, մեծ արագու-
թեամբ և ուժղնութեամբ: Պողպատ-
եայ գլաններուն հասածին պէս, աղմուկը կը
փոխանցուի յարաճուն արագութեամբ՝ գլան-
ներուն դէմ գտնուած մետաղեայ թերթերուն
որոնք կըսկսին թրթռալ և հետեւաբար բար-
դերուն երկու բեւեռները ընդհատ ընդհատ

(*) Պողպատէ չինուած են այս գլանները,
ինչու որ պողպատը ձայնի լաւ հաղորդիչ է:

իրար միացնելու պատճառ կ'ըլլան: Եւեկտորական հոսանքները կը հաստատուին, կ'անցնին եւեկտորամագնիսներուն մէջի կակուղ երկաթներէն, որոնք եւեկտորական այս ընդհատ հոսանքին հետ զուգաչափ մագնիսացումներ կ'ունենան:

Եւեկտորամագնիսներուն վերի կողմը կախուած է մագնիսացեալ ասեղ մը (aiguille acinante), որ կը քաշուի եւեկտորամագնիսէն: Այս ասեղին վերիդին երկաթէ պահպանակ մը կայ, որ կարծաւին մագնիսակա նութիւնը կը չէզոքացնէ ասեղին նկատմամբ ու այս երկաթէ պահպանակին վրայ կը գտնուի ուրիշ կողմնացոյց ասեղ մը՝ հիւսիսը ցոյց տուող: Տակի ասեղին և կողմնացոյց ասեղին դիրքերը իրարու հետ կը կազմեն անկիւն մը, որ ցոյց կուտայ աղմուկին ուղղութիւնը, որ կողմէն դալը: Միեւնոյն ատեն եւեկտորական զանգակ մը կանոնաւորապէս կը գործէ՝ հաստատուած հոսանքին շնորհիւ՝ երբ ձայնական ալիքները գործիքին փոխանցուին կանոնաւորապէս:

Հնարիչը փորձած է նաև որ կարելիութիւն կայ եւեկտորական հոսանքին մէջ զետեղել թեկեֆօն մըն ալ, որ կերպով մը կը քննէ (contrôler) զանգակին ցոյց տուած ձայնը և կ'որոշէ թէ ծովուն մէջի ձայնը պտուտակի՞ թէ ոչ անիւի մը աղմուկն է: Այս թեկեֆօնը մերձաւորապէս կրնայ ցոյց տալ մօտեցող նաւուն հեռաւորութիւնը և անոր ընթացքին արագութիւնը: Ասկէ զատ, բոլոր եւեկտորամագնիսները կրնան երկրորդ հոսանքի մը հետ միանալ, այնպէս որ նաւուն եւեկտորական լամպարները մէկէն ի մէկ վառուին և ինքնաբերաբար ցոյց տան թէ չատ մը նաւեր խմբովին կը մօտենան տարբեր դիրքերէ: (Բնական է որ այս պարագան գիշեր ատեն՝նաւելի կարեւորութիւն կը ստանայ): Գործիքին առաւելութիւններէն մէկն ալ սա է որ միայն այն ձայներու ալիքները կ'ընդունին, որոնք որոշ ուղղութենէ մը կուգան և ընդհակառակը՝ կը մերժէ տարբեր ձայները:

Տօքթ. Շայսլէրի այս մեքենան կրնայ, փոխանակ ջուրի մէջ ընկղմած ըլլալու, օդին մէջ ալ գործածուիլ՝ այն ձայներուն համար, որոնք շոգենաւի սուլիչէ մը, փողէ մը, կամ շեփորէ մը, եւ կամ մշուշի յատուկ զանգակներէ յառաջ կուգան:

ՆՈՒՊԵՐ

ԳՔԲՂԱՆԿԱՐ

Թիակները լրբուն՝ նաւը կը սահի
Ու սիւսհարն է նըսած խորն, բզմայուն:
Ծովափն ի վեր գիւղերու շարք մ'օրօրուն
Կը քածէ իր բսուեցեցեան ամենի:

Ջինջ մակոյկներ երազի պէս կը սուրան.
Վերջալոյս, Պահն է խրնկաւէս համբոյրին.
Եւ վարդագոյն միջոցին մէջ անսահման
Երանութեան քրքրուումներ կը մարմնին...

Օ՝ պատկերներն անմեկնելի իրիկուան
Ու հոգեզուարն խոհեաւ կեանքն անմեկին,
Որոնց անհուն պաշտամունքին մէջ ա՛յնքան
Սուզուած քրէի սա՝ քարփայտեց նաւասին:

...Ու վայելքն, հըմայքն մեծ եւ ուժով
Յուզումներէն արբօիւ, անոյշ եւ հընչուն
Երգ մը լեցուց կապոյտ եթերն ու պերն ծով:
— Նաւագի՛ երգ, սիրոյ հուրհով մը օծուն:

16 յունիս 1904

Մ. ՌԵՂՈՒՐԵԱՆ

Ն Շ Ս. Ն Ս. Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

Անցեալ կիրակի օր, Սկիւտար, Ալէթճեանց բնակարանին մէջ տեղի ունեցաւ նշանակաւորութիւնը Վահրամ էֆ. Տ. Ներսէսեանի՝ Օր. Նեկտար Մ. Ալէթճեանի հետ, երկու կողմի ազգականներու ներկայութեամբ: Վահրամ էֆ., Գաղաքապետական Խորհուրդի և Բաղ. Ժողովի անդամ Վսեմ. Տիգրան էֆ. Տ. Ներսէսեանի որդին, գործունեայ և զարգացած երիտասարդ մըն է որ իր եղբօր հետ ձեռնարկած տպագրիչ—թղթավաճառութեան գործին մէջ արագ յաջողութիւն ունեցաւ և դիրք մը գրաւեց այդ ասպարէզին մէջ: Իսկ Օր. Ալէթճեան, բարեհամբաւ ընտանիքի մը զաւակը, իր բարոյական ու մտաւորական ձիրքերովը համակրելի անուն մը ունի ընտանեկան չըջանալներու մէջ:

Մեր շնորհաւորութիւնները՝ այս նշանակաւորութեան առթիւ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՈՐԵՐ

Յ. Իզմիրեանց Գրական Յանձնաժողովը 1905 տարւոյ մրցանակին համար ներկայանալի երկասիրութեանց նիւթը ինք որոշած և 1903 նոյեմբերին հրատարակած էր ազգ. թերթերուն մէջ, յատուկ Յայտարարութեամբ: Արդ, մինչև այսօր միակ գործ մը ներկայացուած ըլլալով, Յանձնաժողովը հարկ դատած է կրկնել նոյն Պաշտօնական Ծանուցումը ուրկէ օրինակ մըն ալ իմրագրութեանս ուղղուած է: Որոշուած նիւթն է, ինչպէս կը յիշուի, — «Արդի Հայերէնի բառարանի համար նախապատրաստական նիւթերու հաւաքածոյ կազմել, իւրաքանչիւր բառին հանդէպ բառարանական սովորութեանց տեղեկութիւններով, և մանաւանդ ծագման և կիրառութեան մասին բացատրութիւններով»: Յանձնաժողովը նկատելով նիւթին ընդարձակութենը, երեք մասի բաժնած է զայն՝ իւրաքանչիւրին համար մրցանակի բաժին մը յատկացնելով: Ա. — Նոր չինուած կամ ճշգրտուած և նոր առում ստացած և հին Հայերէնէն նորագիտ բառեր ու ոճեր: Բ. — Արեւմտեան գաւառաբարբառներու բառեր և ոճեր: Գ. — Արեւելեան գաւառաբարբառներու բառեր ու ոճեր: — Ձեռագիրները պէտք է յղուին առ Ս. Պատրիարք Հայրն, մինչև 1905 փետրվարի վերջը:

Ազգ. Պատրիարքարանէն ստացանք նաև երկրորդ Պաշտօնական Ծանուցում մը, բարեխիշտակ Ասպետ Զոհնդի կտակին գործադրութեան առթիւ: 1904—905 դպրոցական տարեգլուխին համար պիտի կատարուի թուշակընկալ սանի մը ընտրութիւնը, ուստի այս պարագայէն օգտուիլ փափագող երիտասարդները կը հրաւիրուին մինչև յուլիս 17/30 գրաւորապէս դիմել Պատրիարքարան: Ընտրութիւնը պիտի կատարուի մրցման ձևով և արժանաւորագոյնը պիտի ստանայ նախապատուութիւն: Ընտրելի ուսանողը, որուն չքաւորութիւնը պէտք է վկայեալ ըլլայ, եւրոպա պիտի զրկուի՝ համալսարանական բարձրագոյն ուսման հետեւելու, որուն համար տարեկան 2000 ֆր. թոշակ յատկացուած է Զոհնդեան կտակով:

Քաղ. Ժողովը իր չորեքշաբթիի նիստին

մէջ՝ Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան անդամ ընտրեց Ասլանեան Յարութիւն էֆ. ու որ տարիներէ ի վեր, անպաշտօն կերպով, կ'աջակցի արդէն այդ մարմնոյն և զնահատելի ծառայութիւններ մատուցած է Հիւանդանոցի բարեղարդութեանը համար:

Երուսաղէմի Պատր. Փոխանորդ Տ. Դէորդ Սրբազան շաբթուս մէջ՝ Ատլիյէի պաշտօնատունը երթալով, տեսակցութիւն մը ունեցաւ Կրօնային գործոց տեսուչ Վսեմ. Զիվէր պէյի հետ՝ Երուսաղէմի վանքին վերաբերեալ խնդիրներու մասին, և Տ. Յարութիւն Ս. Պատրիարքի մէկ նամակն յանձնեց՝ Դատական Բարձր. նախարարին ուղղեալ:

Վահագն ԷՖ. Մասթուրեան որ իբր երկուամիս առաջ Դերմանիա ուղեւորած էր՝ Ռատթէոսեան տպարանին ու կաղմատան վերաբերեալ նորագոյն ու կատարելագործեալ կաղմածներու յանձնարարութեան համար, մայրաքաղաքս վերադարձած է:

Մայրաքաղաքիս բժշկական մարմնոյն վրայ կարող անդամ մըն ալ աւելցաւ: Տօքթ. Բ. Էմիրզէ էֆ. որ տասներէինգ տարի առաջ բժշկական ուսումը կատարելագործելով Բարիզի մէջ՝ վկայականը ստացած էր, այդ թուականէն ի վեր ստացած փորձառութեամբը ու ճարտարութեամբը գոհ ձգած է իրեն դիմող բոլոր հիւանդները: Տօքթ. Էմիրզէ էֆ., որ Իզմիրի մէջ ի գործ կը զնէր իր արուեստը, այս անգամ Կ. Պոլիս եկած ու Բերա հաստատուած է, ուր տարակոյս չիկայ թէ պիտի գնահատուի իր բժշկական կարողութիւնը: Իր մասնագիտութիւնն է կանացի և ջղային հիւանդութեանց դարմանումը որուն համար սովորականէ տարբեր մէթոտներ կը կիրարկէ:

Ստացանք Դաւիթ էֆ. Խաչկոնցի հեղինակած ՆՈՐ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՇԽԱՐՀԱԿՐՈՒԹԻՒՆԸ, բաղմաթիւ քարտէսներով, երկու հատորի բաժնուած՝ Ա. և Բ. տարի, Գ. և Դ. տարի (Տարրական և միջին դասընթացք): Վաճառման կեդրոնատեղին է Պալենց Դրատուն:

ԳՐԱԳԻՐ ԱՒԵՏԱՐԱՆ ՄԸ

→ 325 ←

Սիվրիհիսաբեհն, գրասեռ ազգային մը մեզ կը հաղորդէ հետեւեալ շահեկան ծանօթութիւնները՝ քաղքին եկեղեցւոյն մէջ գտնուող Գրչագիր Աւետարանի մը վրայ. —

Թուղթ՝ 325 : — Մեծութիւն՝ 0,16 × 0,12 : — Հաստութիւն 0,6 մ. : — Գրութիւն՝ երկսիւնակ : — Տող՝ 19 : — Ելութ՝ ճերմակ մագաղաթ : — Կազմ՝ կաշեպատ տախտակ, որուն վրայ եռքէն աւելցած արծաթապատ պահպանակ մը : — Հանգամանք՝ բաւական լաւ պահուած, միայն Սիվրիհիսաբի հրդեհէն քիչ մը գրքին ծայրերը այրած, առանց գրերուն հասնելու : Գիր՝ երկաթագիր, սկզբնատառերը գլխագիր. երբեմն զարդագիր ոսկեզօծ և գունաւոր, նուիրական անունները միշտ ոսկեզօծ գիրեր են : — խորան՝ ունի : — Լուսանցազարդ է՝ բայց ոչ բոլորովին : Աւետարանիս առաջին գլուխները ամբողջ զարդագիր են և ունին գեղեցիկ թռչուններով զարդարուն և դրուագուած լուսանցքներ : — Եկար՝ չորս աւետարանիչներու պատկերները գունաւոր և ոսկեզօծ : Յովհաննէս Աւետարանիչի պատկերը պատռուած է միայն : — Դատարկ թերթեր չիկան : — Գրիչ՝ Աստուածատուր սարկաւազի որ Գաղնուկ կոչի : — Թուական 724 : — Տեղ՝ ի Մամիստր : — Յիշատակագրութիւն՝ ունի :

Աւետարանիս սկիզբի 12 թերթերը դրուագեալ են և շատ փոքր ոսկեզօծ գրերով յիշատագրուած են՝ գրող ծաղկող և կազմողին անունները :

Ահա ասոնցմէ մէկը .

Որք աւետեայ յերկնից բանիս :
Բանայք զմիտս և զլսելիս :
Աչաւք նայիք յերեւելիս :
Փախագանձք նախաստուայիս :
Յիշող լերոճք անարժանիս :
Աստուածատրոյ մակագրողիս
Հանգչիլ հոգիով յանճառ
Բարիս :

Մտածելով որ՝ թերեւս իր օգուտը կու-

նենայ հայ հնագիտութեան և բանասիրութեան տեսակէտով՝ մինչև այսօր դրեթէ քաղաքացիներուս ալ անձանօթ մնացած սոյն ընտիր ձեռագիրը, անձամբ աչքէ անցունելով հարկ համարեցի սոյն տեղեկութիւնները հաղորդել Մամիսին ի հրատարակութիւն :
Յ. Հ.

ԳՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆՐԱԲԱՆՆԵՐ

ՎԻԷՆՆԱԿԱՆ Միլիթարեան Հարց Բանկայի վարժարանին ամսվերջի հանդէսը և վկայականաց բաշխումը պիտի կատարուի յառաջիկայ չորեքշաբթի (23 յունիս—6 յուլիս) միջօրէէն յետոյ ժամ 2½/յն (Ը. Ե.) :

Ոչ միայն ծնողքներուն՝ ալ ամէն կրթութեանը համար մտաւորական վայելքի յատկացուած օր մըն է այդ հանդէսին օրը, ուր երկսեռ հրաւիրեալներու ընտրեալ բազմութեան մը ներկայութեամբ տեղի կունենան՝ ուսանողներուն կողմէ՝ մենախօսութիւններ, նուագածութիւն, դպրոցական սիրուն թատերախաղեր և այլն, վարժաբանին Տեսչութեան տեղեկագիրին ընթերցման ու վկայականներու և նուէրներու բաշխման հետ : Այս անգամուան յայտագիրը՝ նախորդներէն աւելի ճոխ ու հետաքրքրաշարժ է՝ կրթական տեսակէտով :

ԱՏԱԲԱԶԱՐԻ Հայուհեաց վարժարանին, — որուն ամսվերջի հանդէսը կատարուեր է յունիս 16/29ին, — այս տարուան չըջնաւարաններն են, Օրիորդք՝ Ա. Ղաւնի Յ. Ֆիլեան (Սթանօզ), Արշալոյս Յ. Ղաւնի (Ստաբազար), Իսկուհի Կ. Ճինկէօզեան (Ռօտօսթօ), Ուսաննա Կ. Մուսէսեան (Խարբերդ), Սաթենիկ Ս. Վարդանեան և Քաթինա Փ. Քրամովի (Կ. Պոլիս) :

ԴՈՆԵՍԻ Ընթանեան վարժարանին այս տարուան ընթացաւարաններն են՝ Պ. Պ. Գ. Տ. Սարգիսեան, Զ. Գաղաղեան, Ս. Եսայեան, Վ. Հաղըրեան և Տ. Մանիսանեան : Վկայականաց բաշխման հանդէսը կատարուեր է յունիս 11ին :

Արսումսկր Կ. Ս. Իիթի-ձեմալ

Տպագրութիւն ԱՐԵՎԵԼԻՔ Օրագրի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Տօքթ. Բ. Էմիրզէ, որ իր բժշկական ուսումը կատարելագործած է Բարբի մէջ եւ 15 տարիէ ի վեր մեծ փորձառութիւն չանած է. այժմ հաստատուած է. Բերա Պէօյլը Բարմաք Գորու, թիւ 16: Մասնագէտ է մանկաբարձութեան եւ կանացի հիւանդութեանց եւ աստեղծ զաւ նորագոյն մեթոտներով կը բուժէ ջղախն ու հոգեկան ամէն կարգի հիւանդութիւններ, ինչպէս նաեւ արգանդախցումէ (hystérie) առաջ եկած հիւանդութիւնները, մասնակի անգամայնութիւն եւ կարկամութիւն եւ ալլըն: Ասկէ զատ. ասկորի եւ սո. վորական (սոլլը (սըրաճա), առանց գործողութեան՝ նոր դրութեամբ մը կը դարձնէ, տեղը առանց յայտնի ընելու: Տօքթ. Էմիրզէ էֆ. կը գտնուի. Բերա Պէօյլը Բարմաք Գորու, թիւ 16 տան մէջ, ուր կերակրէն զատ ամէն օր կ'էսօրէն յետոյ ժամը 1էն մինչեւ 4 (Ը. Ե.) հիւանդ կ'ընդունի. եւ ուրբաթ օրերն ալ ձրիաբար կը դարձնէ հիւանդները:

ՏՕՔԹ. Է. ՉՈՒՔԼՕՍ

Մասնագէտ փորի հիւանդութեանց (ստամոքսի, աղեաց) ինչպէս նաեւ արտադրական արտերու:

Տօքթ. Է. Չուքլօս օր 17 տարիէ ի վեր ի գործ կը դնէ իր արուեստը, վերջերս այցելած է Եւրոպայի գլխաւոր հիւանդանոցները ուր մասէն հետեւած է իր մասնագիտութիւնը կազմող հիւանդութեանց դարմանումի նորագոյն մեթոտներուն: Կը դարձնէ թէ՛ չափահասներու եւ թէ՛ աղոց ստամոքսի եւ աղեաց հիւանդութիւնները: Բիմիական տարրալուծում (որայական եւ քանակական) եւ մանրագէտական քննութիւն ստամոքսային հիւթերու: Կը բուժէ երկկարականութեամբ եւ մաստոսով: Կը դարձնէ ջերմամիզութիւնը իրեն յատուկ դրութեամբ եւ դեղերով:

Հիւանդներ կ'ընդունի ամէն օր ժամ 9էն 12 եւ 2էն 5 (Ը. Ե.), իր բնակարանին մէջ՝ Բերա, Տէրվիլ փողոց, Թէփէ—Պալըի պարտէզին դէմ: Կրնորուն համար սպասման առանձին սրահ: Ստամոքսի եւ աղեաց հիւանդութիւններէ առաջադրող աղքատները կ'ընդունի չորեքշաբթի օրերը ժամ 9էն մինչեւ կէս օր:

9—24

ԱՂԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն քեսակ բոհափիյէ ապրանց

Մեծ—Շուկայ, Բիւրճիկներու դրան կեց, Թ. 41—43

Նոյնպէս, արանց եւ կանաչեց ճաշակաւոր հովանոցներու վաճառատուն, Պօլիս, Սուլթան—Համամ, Միտիլլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ Թօնափիյէի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յատուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տակւնութիւն, եւ դիւրամատչելի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Աղամ Վարդեան մեծապէս գոված ուցած է իր բազմաթիւ յաճախորդները: Կ'արժէ որ Շուկայ ելլող ամէն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հազարու համար:

ՄԵԾ ԼԻՔԻՏԱՍԻՕՆ

ՀԱՍԱՐԱՅԻՆԻԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՅԱՆՆԵՐՈՒ

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Ապրիլ 19/6 երկուշաբթի օրէն սկսած է հաշուեյարդարութիւնը եւ վաճառումն այժմ լուծեալ էֆթիմօրուլօ եւ Ընկերութեան ասան ապրանքներուն: Ընկերութեան վաճառատունը կը գտնուի Սթամպուլ, Սուլթան Համամ, Բազթիվան Խան: Ապրանքներէն մաս մը կը գտնուի նաեւ Սընալըզճի փողոցը գտնուող մթերանոցը: Վաճառքներն են մատաքեղէն, թուիլ, բլիւլ, բրդեղէն, բամպակեղէն, օրք կանխիկ գնուած են անգլիական եւ ֆրանսական գործարաններէ՝ արդի գիններուն բարձրացումէն առաջ եւ այնպիսի գիններով, զորս անկարելի է այսօր ձեռք բերել եւ պիտի ծախուին այժմ հրապարակի վրայ անմրցելի պայմաններով: Հասարակութիւնն եւ վաճառակալք կը հրաւիրուին տեսնել այս վաճառքներն եւ ոգտուել ներկայ առահնկալ առիթէն:



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՂ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ



1881 մարտ 20ի Կայս. Ուլազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, Իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՂԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ-
ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱԻՈՎ ՈՒՂԵՒՈ-
ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԷՄ, Ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կա-
րուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, աւողջապէս վճարուած 10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան 137,300,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-
գլուխ եւ փնտուց հատուցում 282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տուրս 54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան
խան, Վոյվոտա, Ղալաթիա,

ՑԱՍԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄՀՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

ՈՒՅԻ ԿԵԱՆՔԻ, ՕԺԻՏԻ, ԱՐԿԱԾԻ, ԳՄԱՆ ԹՈՇԱԿԻ ՆԻՒՂԵՐ

VICTORIA ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԿԵԱՆՔԻ ապահովագրութիւններ ունի թէ՛
DE Բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց Բժշկական քննութեան
BERLIN Առանց Բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ.
ԲՈՒՆ վճարումները շաբաթական մասնավճարներով տեղի կունենան,
սկսեալ 5 շաբաթէն

Ապահովագրեալ գումար 1902ին Ֆր. 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ին » 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար-
քայական հրովարտելով եւ ուղղակի
կառավարութեան նսկողութեան ներ-
քէւ:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս Պանքա
եւ Քրէտի Լիոնէ

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Տեսուչ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԷՉԷՃԵԱՆ

Պոլիս Քաթրերքոլլու խան
քիւ 45 եւ 45 Կ.

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՋԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒՍԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒՔՍ ԼՈՒԻՏԵ ՊԱՎԻԶՈ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արկածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատունն է Ի Կ. Պոլիս, Քուքի Լիօնէ
Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Դրասնեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52-53-54-55-56

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲՆՐԱ ՄԵԾ ՓՈԴԱՅ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դ'մ

ԳԵ. ՄԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-

խեն մինչեւ իրիկուան Ժ. 11 1/2

ԲԵ. ԳԵ. ՈՒՐ. օրերը ճէն մինչեւ 11 1/2

Երակի օրերը ժամադրութեամբ

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆԻ Զինատանէն, Հնդկաստանէն,
Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած
թաւմ, հոսաւեք եւ առողջաբար թէյերէն,
որոնք ամբան եղանակին յարմարագոյն ըմ-
պելին են:

Միշտ ուշադրութիւն մեր
վաճառանքին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու,
Ճէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ
գլխաւոր քաղաքներուն մէջ,
նոյնպէս Եգիպտոս:



ՏՕԳԹ. ԱՆԹՕՆԻԱՏԻՍ

(Dr. Antoniadis)

Մասնագէտ ծածուկ եւ մորթային ակտերու

Բերա, Սերգիս փողոց, Թ. 20

(Անգլիական դեսպանատան մօտ)

Վկայեալ Վիէնայի Համալսարանէն ուր ու-
սած է տասնութէկ տարի, միեւնոյն ատեն
իր օգնական—բժիշկ ծառայած ըլլալով
Բրոֆ. Նաւմանի, Քարօսիի եւ Տիֆֆէլի
գաղտնի հիւանդութեանց յատուկ քլինիք-
ներու մէջ:

Մինակ ծածուկ հիւանդութիւններէ եւ
մորթային ակտերէ տառապողները կ'ընդունի
զորս կը բժշկէ նորագոյն եւ կատարելա-
գործեալ մէթոտներու համաձայն: Իր մաս-
նագիտութենէն դուրս՝ օրեւէ հիւանդ չըն-
դունիր:

ՏՕԳԹ. ԲՕՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պոլսոյ Կայս. Բժշ-
կական վարժարանին, անդամ Բարիզի Բժշ-
կական համաժողովին: Մասնագէտ՝ արանց
եւ կանանց ծննդական գործարաններու հի-
ւանդութեանց: Պատուոյ վկայագիր. ունի
Պէրլինի, Լոնտոնի, Բեյթայի եւ ուրիշ եր-
կիրներու Ակադեմիաներէն: Հնարիչ բժշկա-
կան գործիքներու եւ հեղինակ իր մասնա-
գիտութեան վերաբերեալ գործերու:

Հիւանդ կ'ընդունի՝ Պոլսոյ կողմը, կա-
մուրջին դէմի տնկիւնը, իր դարմանատան
մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն: Իսկ
Բերա, Թաքսիմ, Փրանսական հիւանդանոցին
դէմ, ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ
իրիկուն ժամ 6 էն 9 (Բ. Ե.)

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՅ ԱՊԱՀՈՎՈՂԴՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Յ Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրեցող կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՐՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒ ԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղեցիկ զինեռով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրութեան ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարգման (accumulation des bēnēfices) ՅՈՒՐԻ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասուցն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Գաքքըն Օղլու

Մասնաձեւը՝ Ղալաթիա, Ինայէթ Սան: Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքացի մէջ



ՅՈՎԱՏԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄԱՐԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեսպանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսանքի քարտի մասին

Պալատական ամէն օր ահուայի ամէն տե՛ռակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան օր եւ է ժամուն կարելի է դիմել: Պալատական կ'երաշխաւորէ իր լեցուցած ու շինած ահուաները: Տորեկները ահուայ քաշել տալու համար որով վարձք մը չկայ. քաշել տալուին կամէն կարեալ է: Վկայեալ առաւանդաւոր ժուհի Տիկին Բօլին եւս կը գտնուի միշտ նոյն դարմանատան մէջ: Աղփայտեալ ձրք

Ա.ՊԱՌԻԿ Վ.Ա.ՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տե՛ռակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւայլն, գինեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-Իփողոց թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շարաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ գրնողներէն՝ 100ին 15 զեղչով: